Հասցե՝ Արտաշիսյան 46/1, Երևան 0039
հեռ.՝ 010303010
mc@astvatsamayr.am

«ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ»
ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
1982

"SOURB ASTVATSAMAYR" Medical Centre JSC

№ 414-134 04.03 2025թ.

Էդմոնդ Հովհաննիսյան Վահեի Ա/Ձ

Հարգելի՛ պարոն Հովհաննիսյան,

2025 թվականի փետրվարի 17-ին «Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն Էդմոնդ Հովհաննիսյան Վահեի Ա/Ձ-ին N ՍԱ-97 գրությամբ տրամադրել էր ողջամիտ եռօրյա ժամկետ անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինելու համար: Գրությունը ստանալուց ամիջապես հետո հեռախոսային զրույցի ընթացքում պատրաստակամություն եք հայտել կատարելու ապրանքի փոխարինումը, սակայն 2024 թվականի մարտի 03-ին «Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի էլեկտրոնային փոստի Ձեր կողմից ուղարկվել է նամակ, որով հրաժարվում եք կատարել ապրանքի փոխարինումը:

Հիմք ընդունելով վերոգրալը փաստում ենք, որ սահմանված ժամկետում Ձեր կողմից ապրանքի փոխարինում չի կատարվել, հետևաբար առաջնորդվելով Պայմանագրի 2.1.7 կետով՝ պատվիրատոն իրավունք ունի Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Ելնելով վերոգրյալից և հինք ընունելով Պայմանագրի 8.9-րդ կետը «Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն միակողմանի մասնակի լուծում է վերոնշյալ պայմանագիրը 21-րդ չափաբաժնի մասով՝ պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017թ մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. պարբերության "*Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝ ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում սպանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը...*"

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկվում է պայմանագիրը միակողմանի լուծելու հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող 3 օրվա ընթացքում «Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ի 1570053952390100 հաշվեհամարին վճարել 525000 (հինգ հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամ ՝ որպես տուգանք համաձայն Պայմանագրի 6.3 կետի, այն է Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, ինչպես նաև որակավորման ապահովման՝ 157500 (մեկ հարյուր հիսունյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ և պայմանագրի կատարման ապահովման՝ 105000 (մեկ հարյուրն հինգ հազար) ՀՀ դրամ գումարները:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ գրությամբ սահմանված ժամկետում ապահովումները չվճարելու դեպքում Պատվիրատուի կողմից կկայացվի պատճառաբանված որոշում, որը կուղարկվի լիազոր մարմին՝ Էդմոնդ Հովհաննիսյան Վահեի Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթացը սկսելու նպատակով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՏՆՕՐԵՆ՝ **ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶՈՀՐԱԲՅԱՆ**

Կատարող՝ Ա.Խաչատրյան
Գնումների բաժին
Հեռ. 010 30 30 10 /4/